



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Մարտ 13, 1955

Արժանաշնորհ
Տ. Բաբգէն ԲՏՆՅ. Մազսուտեան
Նախագահ Միսկան Խորհուրդի
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյն
Պոստոն.

Սիրելի Տէր Բաբգէն,

Ստացած ենք ամսոյ 8 թուակիր Զեր Միսկան տեղեկագրութիւնը, որով կը հաղորդէիք թէ Զեր նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ Միսկան Խորհուրդի մասնակի ընտրութիւնը, եւ ներկայցնելով ամբողջական ցանկը նոր կազմին, կը խնդրէիք վաւերացման պաշտօնադիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անցեցող կանոնաւոր կերպով ընտրուած են եւ կը վայելեն ընտրողներու վստահութիւնը իբրեւ Եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր եւ պարտաճանաչ անդամներ, զորովս կը վաւերացնենք եւ կը հաստատենք անոնց ընտրութիւնը ու պաշտօնները հետեւեալ կերպով.-

Տիարք՝	Հմայեակ Հալէշեան	Ատենապետ
	Յովհաննէս Նահիկեան	Ատենադպիր
	Խորէն Խոլլիկեան	Գանձապահ
	Արմէն Բէշկէկեան	Փոխ-Ատենապետ
	Յովակիմ Տէմիրճեան	Փոխ-Ատենադպիր
	Արտաշէս Տէր Անանեան	Խորհրդական
	Հէրըլտ Զուլալեան	Խորհրդական
	Ճօրճ Թիթի	Խորհրդական
	Ռապրոզ Զարդարեան	Խորհրդական
	Ճան Սուրսուրեան	Խորհրդական
	Զարլի Կարապետեան	Խորհրդական

Կօրհնենք նորակազմ Միսկան Խորհուրդի բոլոր անդամները եւ վստահ ենք թէ անոնք պիտի աշխատին մեր Ս. Եկեղեցւոյ պայծառութեան եւ Տիրոջ փառքին համար: Մաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն, կը ցանկանք որ անոնք բոլորեն ուրիշ արդիւնաւոր զործունէութեան շրջան մը:

Մնամք հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Աղօթարար

ՄԱՄԱՐԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջանորդ Հայոց Ամերիկայի